ՏՆՕՐԵՆ՝ Հ.ՈՍԿԱՆՅԱՆ /  /

---------- ----------------- 2022 -2023ուստարի

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ

# ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ

ԴՊՐՈՑԻ 7-ՐԴ ,, Բ ,, ԴԱՍԱՐԱՆԻ

ԴԱՍՂԵԿ ՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2022-2023 ուստարի**

## Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական

## Ուղղությունները

1. **Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը).**

Դասարանը բաղկացած է 29 սովորողներից (11տղա, 18աղջիկ): Խոստումնալից երեխաներ են՝ խելացի, եռանդուն, պահանջկոտ ու ձգտող:

2. **Ուսումնադաստիրակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.**
   ա/ Աշխատել անհատական ու կոլեկտիվ հիմունքներով
   բ/ Զրույց հայրենատիրության մասին
   գ/Հետևել դասագրքերի բաշխմանը, խնամքին
   դ/ Անկախ Հայաստանի ապագա հպարտ քաղաքացու ձևավորում

3. **Հայեցի դաստիարակություն.**

**3.1 Հոգևոր դաստիարակություն**

Զրույցների միջոցով զերծ պահել երեխաներին աղանդներից, վերագնահատել մեր հոգևոր արժեքները: Հոգևոր դաստիարակությունը՝ հույս, ուժ, բարություն, ձգտում, կյանքի իմաստավորում և արժևորում փոխանցող ուժ է:

**3.2 Գեղագիտական դաստիարակություն**

Ծանոթացնել արվեստի ու գրականության լավագույն գործերին, զարգացնել գեղագիտական ճաշակ: Գեղեցկության ըմբռնումը, իմաստավորումը գեղագիտական կրթության հիմքն է, առանցքը, գեղեցիկի ընկալումից և ճանաչումից է սկսվում գեղագիտական մշակույթի դաստիարակումը, զգացմունքների դաստիարակությունը:

### 3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն.

Բազմադարյան անթիվ հերոսական հաղթանակների, անհամար հերոսների անձնական օրինակներով ձևավորել հայրենասիրություն: Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը մշտապես գտնվել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունը ամենանպաստավոր շրջանն է անձի մոտ հայրենիքի նկատմամբ իր պատկերացումները ճիշտ ձևավորելու, սիրո զգացմունքն

արմատավորելու և որպես հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար:

### 3.4 Ֆիզիկական դաստիարակություն.

Ֆիզիկական դաստիարակությունը անձնավորության համակողմանի և ներդաշնակզարգացման կարևոր բաղադրիչ է: Ֆիզիկական դաստիարակության նպատակն է ժամանակին ձևավորել երեխաների շարժողական կարողություններն ու հմտությունները, զարգացնել հետաքրքրություն՝ երեխային մատչելի շարժողական գործունեության զանազան ձևերի նկատմամբ, դաստիարակել անձի բարոյակամային հատկանիշներ՝ ինքնուրույնության, ակտիվության, մարդկային փոխհարաբերության կուլտուրայի դաստիարակում:

### 3.3 Աշխատանքային դաստիարակություն.

Աշակերտների մեջ սերմանել սեր հանրօգուտ աշխատանքի նկատմամբ: Երեխան պետք է զգա, որ առանց աշխատանքի հնարավոր չէ ապրել, որ աշխատանքն է պարգևում հոգևոր կյանքի ուրախությունը, լիակատարությունը: Աշխատանքը երեխայի հոգևոր կյանքի մեջ պետք է մտնի դեռևս կրտսեր հասակում:

### 3.4 Բնապահպանական դաստիարակություն.

Զրուցել բնության պահպանման և շրջակա միջավայրի մաքրության մասին: Կազմակերպել ծառատունկեր, շաբաթօրյակներ (հետևելով լիազոր մարմնի կողմից ուղարկված ցուցումներին և հրահանգներին):

### 3.5 Դպրոց-ընտանիք կապը.

Կազմակերպել ծնողական ժողովներ, կարևորել փոխադարձ խորհրդատվությունը:Ուսուցիչը և ծնողը ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը:

**Դասարանական ծնողական ժողովներ**

| Անցկացման օրը, ամիսը, տարին | Քննարկվող օրակարգային հարցերը | Ժողովի համառոտ բովանդակությունը | Ծանոթություն |
|---|---|---|---|
| 01.09.22թ. | Ծնողկոմիտեի ձևավորում , ընթացիկ հարցեր | Ձևավորել ծնողական կոմիտեն և ակտիվ աշխատանք տանել դասարանի կազմակերպչական և այլ հարցերի լուծման համար | Կատարված է |
| 24.12.2021 թ. | 1-ին կիսամյակի առաջադիմության վերլուծում | Ներկայացնել 1-ին կիսամյակի աշակերտների առաջադիմության արդյունքները | |
| | Ուսումնադաստիարակչական և Կազմակերպչական հարցեր<br>2-րդ կիսամյակի դաստիարակչական աշխատանքների պլանավորում | Քննարկել սովորողների առաջադիմությունը , վարքը, դասագրքերի, տետրերի առկայությունը, անհարկի բացակայությունները | |
| | Տարեվերջյան ամփոփում<br>Դասարանի առաջադիմության որակի քննարկում և հաշվետվություն՝ տարվա արդյունքների հիման վրա | Ներկայացնել սովորողների առաջադիմությունը տարվա ընթացքում | |

**Անհատական աշխատանքներ ծնողների հետ**

| **Անցկացման օրը, ամիսը, տարին** | Քննարկվող հարցերը | Զրույցի համառոտ բովանդակությունը | **ծանթություն** |
|---|---|---|---|
| պարբերաբար | Մշտապես պահել դասղեկ-ծնող-դպրոց կապը<br><br>Անհատական խորհրդատվության կազմակերպում ծնողների համար | Ապահովել բոլոր ծնողների մասնակցությունը ժողովներին երեխաների առաջադիմության , վարքի դրսևորումների , մասնակցության մասին ինչպես նաև դասավանդող ուսուցիչներից տեղեկություն ստանալու համար | |

# ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԴԱՍԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

| **Անցկացման օրը, ամիսը, տարին** | Քննարկվող հարցերը | Ծնողական խորհրդի նիստերի համառոտ բովանդակությունը | **ծանոթություն** |
|---|---|---|---|
| 01.09.21թ. | Կազմակերպչական հարցեր | Օգնել դասղեկին դասարանի հիգիենայի պահպանման, հակահամաճարակային կանոքնների կիրառման և այլ խնդիրների լուծման հարցում | |
| 24 01 2022թ. | Կազմակերպչական հարցեր | Օգնել դասղեկին կրթության ընթացքում ծագած խնդիրները լուծելու հարցում | |

## ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կ.ժ | կատարողներ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1. | Կազմակերպել ծնողական ժողով, ընտրել ծնողական խորհուրդ։<br>Դասարանական աշակերտական խորհրդի ձևավորում | 06.09 | աշակերտ դասղեկ | |
| 2. | Իմ հետաքրքրություններն ու նախասիրությունները | 13.09 | աշակերտ դասղեկ | |
| 3. | Որոնք են << լավ>> և << վատ>> նորությունները | 20.09 | աշակերտ դասղեկ | |
| 4. | Անկախության անգնահատելի դերն ինձ համար | 27.09 | աշակերտ դասղեկ | |
| 5. | Ի՞նչ է ազնվությունը | 04.10 | աշակերտ դասղեկ | |
| 6. | Ոսուցչի տոն | 11.10 | աշակերտ դասղեկ | |
| 7. | Իմ հետաքրքրություններն ու նախասիրությունները | 18.10 | աշակերտ դասղեկ | |
| 8. | Մարդ, ում մասին կուզեի ամեն ինչ իմանալ | 01.11 | աշակերտ դասղեկ | |
| 9. | Ինչ է ընկերությունը և բարեկամությունը | 08 11 | աշակերտ դասղեկ | |
| 10. | ՈՒ՞մ կուզեի նմանվել | 15.11 | աշակերտ դասղեկ | |
| 11. | Հաղորդակցման ժամ՝ <<Աշխարհին իմ պատուհանից>> | 22 | աշակերտ դասղեկ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 11 | | |
| 12. | Ընկերությունը մեր դասարանում | 29.11 | աշակերտ դասղեկ | |
| 13. | Զրույց <<Արդյո՞ք կարևոր է սեփական կարծիք ունենալը>> | 06.12 | աշակերտ դասղեկ | |
| 14. | Ո՞վ է իմ ընկերը | 13 .12 | աշակերտ դասղեկ | |
| 15. | Ամանորյա հրաշքը | 20 12 | աշակերտ դասղեկ | |

| | | | |
|---|---|---|---|
| 16. | Առաջին կիսամյակի ուսման առաջադիմության ամփոփում | 10.01 | աշակերտ դասղեկ |
| 17. | Եթե ես կարողանայի… | 17.01 | աշակերտ դասղեկ |
| 18. | Հայոց բանակի տոն | 24.01 | աշակերտ դասղեկ |
| 19. | Մարդկանց հանդեպ հարգանքը ` դա ինքնահարգանք է | 31.01 | աշակերտ դասղեկ |
| 20. | Ազգային և եկեղեցական տոները | 07.02 | աշակերտ դասղեկ |
| 21. | Ինչպե՞ս լինել լավ ընկեր | 14.02 | աշակերտ դասղեկ |
| 22. | Ի՞նչ է կոնֆլիկտը | 21.02 | աշակերտ դասղեկ |
| 23. | Հայտնի հայ մարզիկները | 28.02 | աշակերտ դասղեկ |
| 24. | Մայրության և գեղեցկության տոն | 07.03 | աշակերտ դասղեկ |
| 25. | Ինչպես զգուշանալ խաբեությունից / Թրաֆիքինգ / | 14.03 | աշակերտ դասղեկ |
| 26. | Իմ անվանակից հայ ազգային հերոսները | 21.03 | աշակերտ դասղեկ |
| 27. | Ինչ գեղեցիկ է աշխարհը | 04.04 | աշակերտ դասղեկ |
| 28. | Ինչպես պայքարել վատ սովորույթների դեմ | 11.04 | աշակերտ դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| 29. | Ցեղասպանության զոհերի հիշատակի օր | 18.04 | աշակերտ դասղեկ |
| 30. | Երբ աշխատանքը միայն ուրախություն է | 25.04 | աշակերտ դասղեկ |
| 31. | Պատմական ակնարկ Հայաստանի մասին | 02.05 | աշակերտ դասղեկ |
| 32. | Հաղթանակի և խաղաղության տոնի մասին | 09.05 | աշակերտ դասղեկ |
| 33. | ինչպես եմ անցկացնելու ամառային արձակուրդները Հայաստանի այն վայրերը, որտեղ կուզենայի լինել | 16.05 | աշակերտ դասղեկ |
| 34. | Տարեվերջյան  ամփոփում | 23.05 | աշակերտ դասղեկ |